ՄԱՆՐԱՔԱՆԴԱԿՆԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՊԱՏԿԵՐՈՎ

Հ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կոմիտասին նվիրված մեդալների ստեղծման պատմությունը հին չէ։ Նրա մահվանից երեք տասնամյակ անց Վենետիկի Մխիթարյան միաբանության պատվերով դրվագվեց առաջին մեդալը, որը 1966 թ. թողարկեց Միլանի Լորիոլի ֆիրման։ Հեղինակն է իտալացի նկարիչ Վարիսկոն (նկ. 1)։

Մեդալի վրա Կոմիտասը պատկերված է մինչև կուրծքը, գլխաբաց։ Եզրին արված է «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ» մակագրությունը։ Չնայած մեդալի փոքր չափերին (տրամագիծն է 30 մմ), նրա վրա վարպետորեն փորագրված են մեծ երգահանի դեմքի մանրամասները։ Առավել տպավորիչ են աչքերը, որոնք ընդհանուր պատկերին տալիս են անմեղության և բարձր զգացումների, ազնիվ տրամադրության արտահայտություն։ Դիմաքանդակի և գրությունների ստեղծման գործում ակնհայտ է պատվիրատուի անմիջական մասնակցությունը, որից և հուշամեդալը բավական շահել է։

Սովետական Հայաստանում Կոմիտասին նվիրված առաջին մեդալը թողարկեց Հայաստանի երգչախմբային ընկերությունը։ Սրա մի երեսի վրա պատկերված են Կոմիտասի գլուխը՝ թեթևակի դեպի ձախ թեքված և ձեռքը, որը զբաղեցնում է դաշտի ներքևի մասը ամբողջությամբ։ Մեդալը պղնձյա է, տրամագիծը՝ 58 մմ։ Այն հեղինակել և փորագրել է Մնացական Թամրազյանը (նկ. 2)։

Մեդալի առաջին երեսը ստեղծելիս հեղինակը հմտորեն օգտագործել է ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանի գրաֆիկական աշխատանքներից մեկը՝ վերցված Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի գեղարվեստական ձևավորումից[1]։ Դրվագված է «Խմբավոր» («Ղողանջ հաղթության») ստեղծագործումից մի հատված, ուր պատկերված է Կոմիտասը երգչախմբի առջև կանգնած։

Փորագրիչ վարպետը կարողացել է հմտորեն ընտրել այնպիսի հատված (թողնելով մեդալի շրջանակից դուրս գրաֆիկական նկարի ամբողջականությունը), որը արտահայտում է մեդալային արվեստին բնորոշ բովանդակության հակիրճ իմաստը։ Մեդալը հիրավի կարելի է կոչել համապարփակ մի բառով՝ «Երաժշտություն»։ Մեդալագործը կերտել է խոր ստեղծագործությամբ իմաստավորված անկրկնելի մի պահ՝ լրիվ պահպանելով Գ. Խանջյանի մտահղացումը։ Երկրորդ երեսին դրվագված է Կոմիտասի ստորագրությունը և երեք կոմունիներ, որոնք, անկասկած, օտարությունից վերադառնում են հայրենիք։ Այսպիսով, մեդալի երկու երեսները լիովին լրացնում են միմյանց՝ արտահայտելով մտքի տրամաբանական ներդաշնակություն։

Երեք տարի անց, 1969 թ. Մ. Թամրազյանը ստեղծեց երկրորդ մեդալը՝

---

1 Պ. Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1966, նկարազարդումները՝ Գ. Խանջյանի (տե՛ս էջ 152—153)։

նույնպես Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի՝ Գ. Խանջյանի նկարազարդումների թեմայով։ Այն պղնձյա է, տրամագիծը՝ 70 մմ։ Այս անգամ նա երկու երեսների համար օգտագործել է տարբեր գրաֆիկ նկարների հատվածներ՝ «Կռունկ» («Ողողանջ կոտորածի») և «Եղեռն» («Ողողանջ աքսորի»)։ Սակայն դրանք մեկնաբանել է յուրովի (նկ. 3)։

Մեդալի առաջին երեսի վրա պատկերված է Կոմիտասը՝ խելակորույս. ձեռքերը վեր կառկառած, աչքերը փակ, երերուն, տարօրինակ քայլելիս։ Շուրջը դիակներ են։ Զգացվում է դժոխային, անվերջ թվացող ճանապարհի խորությունը։ Նա ընթանում է առաջ, բայց այլևս չի ձգտում դեպի լույսը, երգը։

Երկրորդ երեսին դրվագված են վեր ձգվող ճղակոտոր ծառեր, հեռվում նշմարվում են բնակելի տներ՝ սրածայր տանիքներով, աջ եզրում՝ «ԿՈՄԻՏԱՍ» մակագրությունը։

Այստեղ մեդալագործը, օգտագործելով նկարչի մտահղացումը, ստեղծել է երկկողմանի, տրամաբանորեն միահյուսված և իրար լրացնող մի հուշարձան, որն անվանել է «Եղեռն»։

Այսուհանդերձ, մեդալի առաջին երեսի պատկերը չի կարելի դասել լավագույն օրինակների շարքը։ Միշտ չէ, որ մետաղի վրա որևէ ստեղծագործություն վերարտադրվում է իր ամբողջ խորությամբ, թեկուզ և այն լինի բարձրարվեստ գործ։ Գ. Խանջյանի «Եղեռն» («Ողողանջ աքսորի») գրաֆիկական ստեղծագործությունը, որն ամբողջ նկարաշարի հաջողվածության պսակն է, մետաղի վրա զրկվել է ազդեցության լիակատար ներգործությունից։

Երկրորդ երեսի վրա մեդալագործը փորագրել է «Կռունկ» կոմպոզիցիոն պատկերի մի մասը միայն, Կոմիտասի պատկերը փոխարինելով գրությամբ։ Անշուշտ, այս փոփոխումից մեդալը որոշ չափով շահել է, սակայն հեռացել է նկարչի մտահղացումից։ Մեդալը դիտելիս թվում է, թե այստեղ փորագրված են ճյուղերը կտրտված ծառեր, նուրբ բողբոջներով, այլաբանորեն արտահայտելով հայ ժողովրդի կենսունակության, լուսավոր ապագայի գաղափարը։ Ըստ երևույթին, պատկերը ավելի կշահեր, եթե մեդալի վրա չդրվագվեին շինությունների տանիքները, որոնք առանց Կոմիտասի օտար են և անհասկանալի։ Հեղինակը, օգտագործելով Գ. Խանջյանի գրաֆիկ նկարը, մեդալին տվել է բոլորովին այլ իմաստ, օրգանապես՝ այն կապելով առաջին երեսի կոմպոզիցիոն պատկերի հետ։

Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանը իր արտահայտությունը գտավ նաև հայ մեդալագործների աշխատանքներում։ Կոմիտասյան հոբելյանական մեդալները նոր էջ բացեցին հայկական մեդալային արվեստի պատմության արդի ժամանակաշրջանում։

Մեդալներ թողարկվեցին ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում և բազմաթիվ օրինակներով տարածվեցին որպես հայ ժողովրդի մեծ երախտավորի հիշատակը հավերժացնող հուշարձաններ։ Մյուս կողմից, այդ մեդալներից մի քանիսը, լինելով բարձրարվեստ մանրաքանդակներ, կարելի է դասել հայկական մեդալային արվեստի լավագույն օրինակների շարքը։

Սովետական Հայաստանում ստեղծված հոբելյանական մեդալներից, իր պարզությամբ ու արտահայտչական միջոցների թարմությամբ, աչքի է ընկնում Ստեփան Քյուրքչյանի կերտածը (նկ. 4)։ Սրա առաջին երեսի վրա փորագրված է Կոմիտասի գլուխը՝ դեմքով դեպի ձախ, ձախակողմյան եզրում գրություն՝ «ԿՈՄԻՏԱՍ», երեք վարդյակ և «100»։ Երկրորդ երեսի վրա պատկերված է

1

2

3

4

5

6

7

8

9

10

գութանով վարող գյուղացի, հեռվում՝ սարեր և արև։ Մեծ երգահանի պատկերը զբաղեցնում է գաշտի միայն աջ կողմը, կարծես ազատ տարածություն թողնելով երաժշտության հնչյունների համար։ Կոմիտասը գլխաբաց է, մորուքով, շեշտված դիմագծերով, հայացքը դեպի ցած. թվում է, թե նա դաշնամուրի առջև ստեղծագործում է։ Մանրանկարը ներկայացնում է մարդկային ազնիվ մի նկարագիր՝ հոգնատանջ, զգայուն հիշողությունների մեջ հարատևող մի կերպար։

Երկրորդ երեսի վրա սխեմատիկ գծերով ներկայացված է հողի աշխատավորի՝ հայ գյուղացու հավաքական պատկերը։ Նկարիչը խուսափել է դիմագծերի մանրամասներից և գտել արտահայտչական այնպիսի միջոցներ, որոնք մեդալին տվել են խոր իմաստ։

Մեդալը պղնձյա է, տրամագիծը՝ 58 մմ, թողարկել է Հայաստանի երգչախմբային ընկերությունը։

Նույն ժամանակ թողարկվեց մի այլ մեդալ (նկ. 5)։ Նրա առաջին երեսի վրա դրոշմված է Կոմիտասի գլուխը՝ թեթևակի դեպի ձախ շրջված, գլխաբաց, փակ աչքերով։ Հակառակ երեսը հարթ է։ Մեդալը թողարկել է ՀՍՍՀ գեղարվեստական իրերի կոմբինատը. նրա տրամագիծն է 85 մմ։

Այստեղ նկարիչը իր առջև դրել է վերին աստիճանի դժվարին ու պատասխանատու խնդիր՝ առանց գրությունների և այլ մանրամասների ներկայացնել Կոմիտասի նման բարդ ու խոր անհատականության յուրովի և խոսուն դիմապատկերը։ Դա նրան հաջողվել է։

Կոմիտասյան հոբելյանական օրերին ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության պատվերով թողարկվեցին պղնձյա երկու փոքրիկ մեդալներ ևս։

Առաջին մեդալի վրա (նկ. 6) դրվագված է Կոմիտասի գլուխը՝ կիսաթեք դեպի աջ, ձախ եզրում գրություն՝ «ԿՈՄԻՏԱՍ. 100», աջում՝ դափնե ճյուղ։ Մեդալին օղակով ամրանում է քառանկյուն տախտակ, որի վրա փորագրված է քնար և «100»։ Երկրորդ երեսը հարթ է, կրծքին կրելու համար։ Հեղինակն է՝ Խաչիկ Մուրադյանը։ Չնայած մեդալի փոքր չափերին (տրամագիծը՝ 30 մմ) ստեղծված է կենսախինդ, դեպի լույսը ձգտող մի դիմաքանդակ։

Երկրորդ մեդալը թողարկվել է կոմիտասյան հոբելյանական փառատոնի հաղթողներին պարգևատրելու համար։ Տրամագիծն է 25 մմ։ Սրա առաջին երեսը կրկնությունն է վերը նկարագրված Ս. Քյուրքչյանի մեդալի առաջին երեսի։ Երկրորդ երեսին դրվագված է պսակ, որի կենտրոնում՝ «I. 100»։ Մեդալին օղակով ամրանում է քառանկյուն հարթ տախտակ՝ կրծքին ամրացնելու հարմարանքով։

Թողարկվել են նաև այս մեդալների տարբերակները՝ փառատոնի երկրորդ և երրորդ տեղերը նվաճողներին պարգևատրելու համար, որոնց հակառակ երեսին համապատասխանորեն դրվագված են՝ «II. 100» և «III. 100»։

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի տոնակատարության առթիվ նկարիչ Արտաշես Թարումյանն իր նախաձեռնությամբ ստեղծեց Կոմիտասի պատկերով մեդալ, որը պատրաստվեց Երևանի էլեկտրաշարժիչ գործարանում։ Մեդալի առաջին երեսին դրվագված է Կոմիտասի գլուխը կիսաթեք դեպի աջ, եզրում գրություն՝ «ԿՈՄԻՏԱՍ. 100»։ Երկրորդ երեսին պատկերված են շուրջպար բռնած երեք կանացի կերպարներ։ Մեդալը պղնձյա է, տրամագիծը՝ 60 մմ։

Կոմիտասի դիմաքանդակը տրված է խոշոր, շեշտված գոգավորումներով, որոշ չափով հեռու կոմիտասյան իրական պատկերից, սակայն կերպարն այն-

քան հարազատ է, որ, այնուամենայնիվ, զգացվում է նկարչի անկեղծ վերաբերմունքը և դիմաքանդակի ջերմությունն ու մտերմությունը։

Էջմիածնի կենցաղային մետաղյա իրերի գործարանը 1970 թ. թողարկեց Կոմիտասին նվիրված մի մեդալ, որի հեղինակն է՝ Արարատ Հովսեփյանը։ Մեդալը ոսկեգույն մելխիորից է, տրամագիծը՝ 30 մմ։ Առաջին երեսի վրա պատկերված է Կոմիտասի գլուխը դեպի ձախ թեքված, երկրորդի վրա՝ երգահանի ստորագրությունը։ Կոմիտասը ներկայացված է գլխաբաց, մորուքով, խորաթափանց հայացքով, կարծես կանխագուշակելով իր աղնիվ գործի հաղթանակը։

Հոբելյանական օրերին թողարկվեցին նաև Կոմիտասին նվիրված բազմաթիվ հուշանվերներ։ Դրանցից մեկը պղնձյա մետաղի դրվագում է, որը վերածվել է մեդալի, հակառակ երեսի դատարկ տարածությունը լրացնելով պլաստիկ զանգվածով։ Սրա առաջին երեսի վրա պատկերված է Կոմիտասի գլուխը։ Բարձրաքանդակի դիմագծերը կոկված են, այդ պատճառով այն զուրկ է ջերմությունից։

Կոմիտասին նվիրված մեդալներ են թողարկվել նաև սփյուռքում։ Հայաստանից դուրս դրվագված առաջին հոբելյանական մեդալը ստեղծվեց ԱՄՆ-ի հայկական թեմի Առաջնորդարանի նախաձեռնությամբ[2]։

Մեդալի (նկ. 7) առաջին երեսի վրա պատկերված է Կոմիտասը մինչև կուրծքը, կիսաթեք դեպի ձախ, շուրջը «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ։ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՄՆՆԴԵԱՆ» գրությամբ։ Դիմաքանդակի աջ և ձախ կողմերում փորագրված է «1869. 1969»։ Պատկերի տակ մեդալի հեղինակի մասնագիր անունն է՝ «Ա. ԱԿՈԲՕՖՖ»։

Կոմիտասն այստեղ ներկայացված է խորաթափանց, հեռուները նայող լավատես հայացքով։ Նա հաղթական արշավի ճանապարհի խոշընդոտները հաղթահարած, հաստատուն քայլերով դեպի նպատակը ձգտող կերպար է։

Երկրորդ երեսի դաշտի վերևի մասում դրվագված է երաժշտական էմբլեմ՝ խաչաձև դասավորված փողեր, քնար և դափնե ճյուղեր, որի տակ «Առավոտուն բարի լույս» երգի նոտայից մի փոքրիկ հատված և երկտող.

«Առաւօտուն բարի լուս
Ատուած պահէ ամէնուս»[3]։

Մեդալի դաշտի ներքևի մասում, Արարատի ֆոնի վրա, պատկերված են հայկական գյուղեր եկեղեցիներով։ Առջևում գյուղացին զույգ լծկանով վար է անում։ Շուրջը գրություն է անգլերեն լեզվով՝ „KOMITAS CENTENNIAL· APMENIAN FOLK MUSIC" (Կոմիտասի հարյուրամյակը. Հայկական ժողովրդական երաժշտություն)։ Դաշտի աջ կողմում հեղինակի անունը՝ A. AGOPOFF Sc:

Մեդալը թողարկվել է Նյու-Յորքում, արծաթից, բրոնզից և շատ քիչ օրինակներով ոսկուց։ Տրամագիծն է՝ 38 մմ։

---

2 Հայաստանի պատմության թանգարանի դրամագիտության բաժնում պահվում են այս մեդալի արծաթյա և բրոնզյա օրինակները, որոնք թանգարանին է նվիրել պրոֆ. Զ. Պտուկյանը (Նյու-Յորք)։

3 Հմմտ. Կոմիտաս, Եմբերգեր, Երևան, 1969, էջ 23։

Կոմիտասի դիմաքանդակով Ա. Ակոբովի[4] այս մեդալն արդի հայկական մեդալային արվեստի լավագույն օրինակներից մեկն է։ Մեդալի ստեղծման գաղափարը հղացել և նախնական գծագրությունը Ա. Ակոպովին է տրամադրել պրոֆ. Զ. Պտուկյանը[5]։

Նույն ժամանակաշրջանում մեդալ թողարկվեց նաև Կահիրեում։ Նրա առաջին երեսի վրա պատկերված է Կոմիտասի գլուխը՝ դեմքով դեպի ձախ, ցածում ռելիեֆ խոշոր տառերով գրություն՝ «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ», աջ եզրում՝ «1869—1935»։ Երկրորդ երեսի վրա փորագրված է «ԳԱՀԻՐԷԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ. ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿ», ներքևում՝ դափնե ճյուղեր (նկ. 8)։

Առաջին հայացքից թվում է, թե մեդալի վրա Կոմիտասը ներկայացված է անհրապույր դիմագծերով և անգամ նման չէ իրական պատկերին։ Սակայն այստեղ է, որ մեդալի հեղինակը հանդես է բերել մեծ հմտություն, փորագրելով ինքնօրինակ պատկերաքանդակ։ Նա մեծ նշանակություն է տվել յուրաքանչյուր «մանրուքին», նույնիսկ մեդալի ձևին։ Այն քառանկյուն է՝ քիչ կլորացված եզրերով (չափերը՝ 70×60 մմ)։ Դիտողը զգում է, որ իր առջև ոչ թե օրերը խուցերում մթնեցնող վանական է, այլ արևից ու լույսից ճառագայթված, կյանքից իմաստնացած մի մարդ, որը դիմաքանդակին ներշնչում է անսահման անկեղծություն և անմիջականություն։

Պահպանելով մեդալների թողարկման ավանդույթը Մխիթարյան միաբանությունը նույնպես Կոմիտասին նվիրված մեդալ պատվիրեց։

Մեդալի առաջին երեսի վրա պատկերված է Կոմիտասը մինչև կուրծքը, վեղարով, դեմքը թեթևակի ձախ շրջված։ Պատկերի երկու կողմերում գրություն՝ «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ» (նկ. 9)։

Կոմիտասին ներկայացնելով հոգևորականի հագուստով, նկարիչը ընդգծել է նաև նրա եկեղեցուն ծառայելու, «մեծ վարդապետ» լինելու գաղափարը։ Նուրբ գծերով պատկերված է մեղմ ու խորհրդավոր, դառնություններով իմաստավորված մի կերպար։ Սա Կոմիտասյան մեդալային պատկերասարահի լավագույն մանրաքանդակներից է, ուր նկարիչը արտահայտչական սուղ միջոցներով, սահմանափակ տարածության վրա ստեղծել է հոգեբանական խոր կերպար։ Մեդալը մի երես ունի։

---

4 Ակոբ Մինասի Ակոբովը ծնվել է 1905 թ. Սիլվեն քաղաքում (Բուլղարիա)։ 1929 թ. տեղափոխվել է ԱՄՆ։ Սովորել Կոլումբիայի համալսարանում, ապա Գեղարվեստների ազգային ակադեմիայում։

Ամերիկահայ անվանի քանդակագործի ստեղծագործության մեջ նշանակալից տեղ են գրավում մեդալներն ու պլակետները։

Տարբեր ժամանակներում նրա ստեղծագործական մտքի արգասիքն են Ջոն Քենեդուն, Ալբերտ Դորնին, Էդգար Հուվերին, գեներալ Ս. Ջեկսոնին, Ռ. Հովարդին, Թ. Ջեֆերսոնին, Մոնակոյի արքայադուստր Գրասին (պլակետ), գրող և ժուռնալիստ Վիլյամ Բրայանտին, Ալեքսանդր Դվորժակին, գեներալ Վ. Սկոտտին և ուրիշների նվիրված մեդալները։

Ա. Ակոբովի ստեղծած դիմաքանդակները մեդալների վրա աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, կերպարների բացահայտման խորությամբ։

Նրա կերտած մեդալներից մի քանիսը արժանացել են ԱՄՆ-ի և Եվրոպական երկրների մրցանակների։ Հատուկ մրցանակներ են շահել «Ջոն Քենեդի» (1964 թ.) և «Էդգար Հուվեր» (1966 թ.) մեդալները։

5 Այդ մասին մեզ հայտնել է ինքը՝ Զ. Պտուկյանը։

Բեյրութի կիրակնօրյա դպրոցների օժանդակ միության նախաձեռնությամբ նույնպես թողարկվել է մեդալ (նկ. 10)։ Նրա առաջին երեսի վրա պատկերված է Կոմիտասը մինչև կուրծքը, դեմքով կիսաթեք դեպի աջ։ Շուրջը՝ «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ. 1869—1969» մակագրությամբ։

Երկրորդ երեսի վրա փորագրված է վեց տողանոց գրություն՝ «ՀԵԿԴՕՄ. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹԻՒՆ. ՊԷՅՐՈՒԹ. 1969»։ Մեդալը սպիտակ մետաղից է, տրամագիծը՝ 30 մմ։

Այստեղ Կոմիտասը դրվագված է համեմատաբար երիտասարդ հասակում, հպարտ կեցվածքով, անմիջական և անկրկնելի անմեղությամբ։

Հոբելյանական օրերին, մեդալներից բացի, բազմաթիվ օրինակներով թողարկվել են նաև կրծքանշաններ, որոնք աչքի են ընկնում բովանդակության, արտահայտչական միջոցների ու ձևերի բազմազանությամբ։

Կոմիտասին նվիրված մեդալները համեմատաբար քիչ են։ Սակայն դրանք տարբեր են և յուրօրինակ։ Այդ իրողությունը թերևս պայմանավորված է դեռ Կոմիտասի կենդանության օրոք ստեղծված պատկերագրական առանձնահատկություններով, որոնք մեծապես օգնում են մեդալագործներին։

Սակայն ինչ ստեղծվել է առ այսօր սկիզբն է այն մեծ գործի, որ պետք է հավերժացնի անվանի երգահանի հիշատակը մեդալների վրա՝ կերտելով արվեստի խորիմաստ մանրաքանդակ հուշարձաններ։

ПАМЯТНИКИ МЕЛКОЙ ПЛАСТИКИ С ИЗОБРАЖЕНИЕМ КОМИТАСА

Г. В. САРКИСЯН

Резюме

История создания медалей, посвященных Комитасу, охватывает лишь одно десятилетие.

Первая медаль в честь Комитаса была выпущена в Милане, по заказу Мхитарянской конгрегации в Венеции, в 1966 г. В том же году, немного позднее, была чеканена медаль в Советской Армении. На лицевой стороне изображена голова Комитаса. Здесь медальер искусно использовал графическую картину Г. Ханджяна «Хмбавар» из серии иллюстраций к поэме П. Севака «Несмолкающая колокольня».

В 1969 г. отмечалось 100-летие со дня рождения Комитаса, в память которого были выпущены медали как в Советской Армении, так и за рубежом. Среди медалей, выпущенных в Армении, примечательна работа С. Кюркчяна, отличающаяся своей простотой и новизной выразительных средств.

Первая юбилейная медаль за пределами Армении была выпущена в США. Автор медали А. Акопов создал великолепный портрет Комитаса, бросающийся в глаза своей монументальностью и своеобразием трактовки образа. Медали были выпущены также в Каире, Бейруте и Венеции.